ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 27

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում . . . . . 14 ղրան
Գաւառներում . . . . . 20 ղրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ռբ. 50 կ
Թուրքիա . . . . . 50 ղրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանգ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Չորրորդ ,, ,, ,, 5 ,,

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւում է գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք „ու“ ի և „վ“ ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ -ու-ով:
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնում: Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախը:
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն զերծ է համարում պատասխանատուութիւնից:
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 ղրան 10 շահի:

№ 27 1912 Թ. ՇԱԲԱԹ 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1912 Թ. № 27

ՏԱՃԿԱՀԱՅ ՍԵՐՍԵՓՆԵՐ ԵՒ ԲՈՂՈՔՆԵՐ

—

Սահմանադրական Տաճկաստանը Համիդի օրերի դժոխք Տաճկաստանից էլ անցաւ: Բիթլիսի և Վանի շրջաններում անխնայ կոտորում են հայերին՝ կենդանւոյն մորթեզերծ անելով նրանցից շատերին: Վերջին տեղեկութիւնները յայտնում են, որ Վանի շրջանի բոլոր հայ գիւղերը քանդուած են և ժողովուրդը կոտորուած: Պոլսում հայերի մէջ տիրում է խիստ մեծ յուզում: Ազգային ժողովը եռանդուն նիստեր է գումարում: Պատրիարքարանը յայտնել է կառավարութեան, որ եթէ անմիջապէս չդադարին կոտորածները, ապա իրենք պատրիարքարանի, եկեղեցիների, դպրոցների և այլն բանալիները կյանձնեն իրենց-Տաճկաց և դորանով կյայտնեն ընդհ-բողոքք և կդիմեն ջտար պետութիւններին:

Հ. Ց. Դաշնակցութիւնը մի տեսակ ուլտիմատում է տուել կառավարութեան, որ եթէ չդադարեցուցեն ջարդերը, ապա իրենք կստանձնեն ժողովրդի պաշտպանութիւնը:

Ս. Դ Հնչակեան կուսակցութեան Տաճկաստանի կենտրոնական Վարիչ Մարմինը Օգոստոս 24-ին հետևեալ բողոքագիրն է ներկայացրել Եպարքոսին

«Հայաստանի մէջ վերջերս պատահած տխրահիթ դէպքերը իրաւամբ մտքերը խորապէս յուզելու առոիճան հասած են: Մեր Մասնաճիւղերէն այդ աոթիւ յաճախակի և խիստ բողոքներ կտեղան մեզ: Հայրենասիրական պարտք կհամարինք այդ դէպքերը Ձեր մասնաւոր ուշադրութեանը յանձնել: Փափագող ըլլալով Օսմ. պետութեան խաղաղ զարգացումին կուզանք պարտաւորացնել, որ ամեն ջանք չընայելով կտրուկ միջոցներ ձեռք առնէք հաստատելու համար խաղաղութիւնը Հայաստանի մէջ»:

«Նոր-Աշխարհ» №-62.

Վերահրատարակում

Սեպտ. 4-ի փոստով ստացանք 61, 62 և 63 բովանդակալից ու ճոխ համարները «Նոր-Աշխարհ»-ի, որ վերահրատակուել սկսել է Օգոստոսի 25/5 Սեպտ.-ից:

Կրկին հրատարակուելու առթիւ № 61-ի ճակատում կարդում ենք. «Տպագրական տեսչութիւնը, Մայիս 16-ին, Նախորդ պատերազմական Ատեանին որոշման համաձայն, փակեց, Նոր-Աշխարհ»-ը: Երեք ամսեայ մը դադարէ յետոյ՝ վերարտօնուած[1]) ըլլալով՝ այսօր կսկսենք թերթին հրատարակութիւնը»:

«Նոր-Աշխարհի» վարչութիւն

Ի բոլոր սրտէ ողջունում ենք «Նոր-Աշխարհ»-ի վերստին հրատարակուելը: Նման աննախընթաց, ճոխ և ուժեղ մի թերթի հրատարակութիւնը կարող է միայն ընդհ. ուրախութիւն առթել Խմբ.

«Կոհակ» Օգոստ. 15 համարից տեղեկանում ենք, որ վերարտօնուած է «Ազատամարտ»- և «Իշխիրաք» թերթերի հրատարակութիւնը, որ խափանուած էր զին. ատեանի կողմից

[1]) Արդեօք «բարեմիտ» «Հայրենիք»-ականները այժմ իրենց գոնէ մի փոքր անհանգիստ կզգան այս տողերը կարդալով և յիշելով իրենց դարբնած այն չարահնար սուտը, որ իրենց ժամուլով դիտմամբ ցարածել էին «Նոր-Աշխարհ»-ի «դրամի չգոյութ.» պատճ. դադարմ. մասին: Ե՞բր կարելի է վերջապէս մի ազնիւ ու կօրրեկտ վարմունք տեսնել այդ մարդկանցից ու իրենց օրգաններից: Խմբ.

ՄԵՐ ԻՆՏԵԼԼԻԳԵՆՑԻԱՆ[1])

III.

«Միտք» № 25-ի սոյն վերտառութիւնը կրող մեր առաջնորդողում մենք տեսանք մեր երիտասարդութեան որոշ մասի մրտաւոր անբաւարար և բարոյական խիստ տխուր պատկերը:

Այժմ անցնենք այլ խմբաւորումների կամ այլ անհատների:

Մի քանի տարիներից ի վեր՝ լեռնից ուժգնակի վայր հոսող շառաչալից գետակի նման՝ աղմկում էին մեր շրջապատը մի քանի զոյգ, այժմ բոլորովին բեկորների վերածուած, երիտասարդներ:

Կլանուած բրօշիւրներով, նոքա 1000-ամեայ անշարժ ու անփոփոխ այս Պարսկաստանն էին փոխադրել թռիչքներ գործող և կապիտալիստական կարգերով հրզօր սրևմուտքը, անուանենք օրինակ Գերմանիան:

Ինչ հասկանալի, իրերի բնական հետևանք և օրուայ հարց էր այնտեղ, կամ՝ այն կողմերում, մեր բրօշիւրիստները յամառօրէն և անյարիւրօրէն պատուաստել էին նկրտում յանհնարինս յետամնաց, ընկերական և կենսական բոլորովին այլ հարցերով տարուած մեր անպատրաստ ժողովրդի վրայ:

Գեղաղանցօրէն ֆրազիօրների այդ աննշան խմբակը, հասկանալի ձևով եթէ ասենք, ճգնում էր կոյրին հասկացնել գոյնը: Եւ բնականօրէն նպատակի չհասնելով, հակառակ բազմաթիւ դասախօսութեանց, մատնուեց մոռացութեան, դատապարտուեց անգործունէութեան, կարճօրեայ և պատահական տրիումֆից յետոյ, որը արդիւնք էր Պարսկաստանի տարեբային և յանկարծօրէն պորթկող շարժման:

Մտաւորականի կողմից այս խմբ[illegible] մեր արդէն մատնանշած անգ[illegible]ցիտասարդութիւնից բարձրը էր և կարող էր օգտակարլինել մեր հասրակ. եթէ այնք .ֆանատիկ և կամ այնքան սոֆի եղած չլինէր:

Հերվէից անդր անցած այդ՝ ծագմամբ փիպն հայ «Մարքսիստները»՝ հայ ու Հայաստան, ազգ ու ազգային խնդիր բառերը լսելիս այսահարւում էին և իրենց ուղղափառութեան բարձունքից արհամարհանքի քմծիծաղ տալով ազգային պատմա-անհատականութիւնը պաշտպանել ձգտողների վրայ, երգում էին համաշխարհային բանուորութեան ցաւը և վրճռել կամենում համամարդկային երջանկութեան ծանր խնդիրը, մոռանալով անդին՝ հոգալ իրենց ժողովրդին և մանաւանդ իրենց հարազատներին, որոնք յայտնի է տառապում են նիւթականապէս անապահովութիւնից:

Նոցա և ժողովրդի մէջ չկար ոչինչ կապ և ներքին միութիւն, որովհետև օդից էին կախուած նոքա իրենց անժամանակ քարոզով: Նոքա զօրավարներ էին առանց զօրք ու զօրաբանակի, ուստի և աննկատելիօրէն էլ հալուեցան և քաշուեցան ասպարիզից, մէկդի դնելով յուսահատութիւնից իրենց երէկուայ «իզմերը» և այն «դեմօկրատիային», որի անունից կուրծք էին թակում և որի համար իսպառ անհասկանալի մնացին:

Սրանց հետ պէտք է հաշուել և նոցա, որոնք Ժընևի և Եւրոպ. այլ քաղաքների համալսարանները տեսնելով՝ եկել էին այստեղ «ծայրաբոյն ձախակողմեան սկզբունքներով», բայց սոքա էլ մեռան-նոյն պատճառներից ինչ վերևինները և առ առաւելն հանդիսացան մեր կարօտ և օգնութեան արժանի ժողովրդի համար այն «Նոյեան Ագռաւները», որոնց ցայտուն օրինակը տուել է մեզ անմոռանալի վիպասան Մուրացանը:

Սրանց մոլոր ու մոլար ուղիով ընթանալ են ցուցնում նորազոյն(?!) մի քանի երիտաս. ևս, որոնք իրենց խիստ սահմանափակ կրթութիւնն ստացել են քաղաքիս օտար միսսիոնների դպրոցներում, որոնց ներսում հայկական ու ժողովրդական ոչինչ չկայ, բացի շաբլոն ձևերից, արտայայտութիւններից ու արգահատանք յարուցող խօսքերից:

—Մեզ համար ազգ, կրօն, եկեղեցի և այլն նշանակութիւն չունի-ասում են այն նորելուկները, որոնց ուղեղները վաղուց են մթագնած անմարս և անգիր արած զանազան կատեշիզմներով և որոնց վարդապետները անվիճելիօրէն պատկանում են մարդոց այն կատեգորիային, որոնք իրենց..... աւետարանից դուրս ամենքին հերձուածող և մոլորեալ են համարում: Էլ հասկանալի կլինի թէ որ չափով ազատախոհ և լայնասիրտ կլինին նոցա «սանիկները»:

Մեր ժողովրդի հետ ոչ մի հոգևոր կապ չունին այս նորազոյնիկները և մեծ ցաւ հայ ժողովրդի, սոքա ապրում և շնչում են այն մթնոլորտում, ուր արդէն ձեռք առնուած.... միջոցներով խամլում և թշնում է ազգայնութեան ամեն մի ջինջ ու մաքուր զգացում և վաղը մեզ, թերևս, պէտք

[1]) Տես սկիզբը «Միտք» № №-24և25

[1]) Տես սկիզբը «Միտք» № №-24և25

եկող այդ մարդիկ դիմում են այժմէն դէպի Ժատրպտում և դէպի խորթացում։

ՆՈՐ ԿԱԶՄ
և
Միանգամայն նոր ընտրութիւններ

Ամսոյս 2-ին, կիրակի օր պատարագից վերջ՝ բարձրապատիւ Ներսէս վարդպ. Մելիք Թանդեանը խօսեց եկեղեցում և բացատրեց իւր գալստեան նպատակը։

Յարգոյ հօր խօսքերից իմացանք, որ Օգոստ. 22-ին թեմիս նախկին առաջնորդ գերապատիւ Տ. Կարապետ Եպս. Տէր Մկրտչեանը Վեհին հրաժարական ներկայացրած լինելով, Վեհը իրեն ուղարկել է Թաւրիզ, որպէս թեմի ժամանակաւոր կառավարիչ։

—Թեմի անկազմակերպ վիճակը, թեմի խորհրդի և թեմ. ժողովի չգոյութիւնը, ասաց հ. սուրբը, մեծ ցաւ է պատճառել Վեհի սրտին, երբ մանաւանդ մի կողմից որոորդութիւններ են շատացել և միւս կողմից դատական գործեր էլ թափուել և կարօտում են մարդկանց։ Ցաւ է իրօք տեսնել, որ Արիմեանից ինքնավարութեան կոնդակ ստացած Ատրպատականի թեմը այսօր թողել է ամէն ինչ և երես դարձրել իր գործերից։

Ապա կոչ անելով հասարակութեան, որ իւր սեպհական գործերից դուրս՝ շաբթին մէկ կամ մի քանի ժամ նուիրէ հասարակական գործերին, վերջացրեց իւր խօսքը, նորէն հրաւիրելով ընտրեալներին դէպի գործ, իսկ հրաժարականների փոխարէն կատարել նոր ընտրութիւններ։

Պատարագից յետոյ, մի քանի քաղաքացիների հետ մենք ևս եկանք առաջնորդարան և պետակցեցանք բարձրապատիւ հօր հետ։ Խօսակցութիւնից էլ պարզուեց, որ հայր սուրբը անելու է լրացուցիչ ընտրութիւններ հրաժարականների փոխարէն, առարկելով, որ իրը կան 14 ոչ-հրաժարականներ։ Նոյնպիսի տեղեկութիւն լսեցինք և թեմ. խորհրդի մասին, որի իրը մի անդամներից «հրաժարական» չէ ստացուել։ Մինչդեռ իրօք փաստ է, որ մարդիկ երկար ամիսներ-Ապրելից սկսած ժողովի չգալով՝ փաստապէս կազմալուծել են թեմական խորհուրդը ևս։

Արդ՝ մենք գալիս ենք ասելու, որ եթէ եղել են անձինք, որոնք իրերի դրութեան մասին այդպէս զեկոյց են տուել մեր նորեկ ժամանակաւոր կառավարչին, ապա շեղել են նորան ուղիղ ճանապարհից և չեն եղել օգտակար իրենց խորհրդատուութեանց մէջ։ Եւ այդպիսով անշուշտ ձախողելու են հայր սուրբի յաջողութիւնները։

Երկու կարծիք չէ կարող լինել այն մասին, որ արդէն գումարուած թեմական ժողովի անդամների «ընտրութիւնը շատ տեղ եղել է անցիտակցաբար, զգացողով, որ այդ «ընտրութիւնները» եղել են յանուն ժողովրդի, բայց ընդդէմ նրա կամքի, որ այդ ընտրութիւնները, սկսած կենտրոնից մինչև գաւառները, խիստ աննշան բացառութեամբ, եղել են ոչ-ժողովրդական ընտրութիւններ։ Այնտեղ են «Զանգի» էջերը լիովին ապացուցելու մեր ասածները «խորթ կամ անհատաստ պատգամաւորների» մասին։

Հէնց այն հանգամանքը, որ այդ ժողովը իւր իւ՛ր առաջին նիստերում-ընդ նախագահութեամբ ապաջնորդ հօր-ոտնահարեց Վեհից հաստատուած կանոնադրութիւնը-թոդ հակառակը պընդէ փոխանորդ հայր Մանուկեանը-զրկեց նորան վերջին համակրութիւնից ժողովրդի աչքում, որովհետև նա ամեն ինչ արեց կամայականութեամբ պատգամ. ճանաչելու մէկին, որ դեռ 4 ամիս էլ չկար եղել իւր ընտրութեան վայրում և կամ նորանց, որոնք բնաւ չէին ճանաչում իրենց «ընտրող» գաւառն ու ժողովրդին։

Այսպիսի հանգամանքներում հրամայական է բոլորովին նոր կազմ թէ թեմական ժողովի և թէ թեմական խորհրդի։ Առանց այն էլ, կարծում ենք, հէնց թերթերից պարզ պէտք է լինէին այս ամենը մեր թեմի յարգոյ կառավարչի համար։ Երբ արդէն մըտրակի մարդիկ ու ժողովրդական ազաս քուէն շահագործողները այլ ևս ըստ առաջնոյն չեն հրամայում հրապարակում, ժամանակ է, որ հրաւէր կարդացուէր միանգամայն նոր ընտրութեանց, փոխան այն պատգամաւորների, որոնք օրը օրին մի հակասական արձանագրութեամբ վանել են ժամանակները, որոնք առ ի չգոյէ օպպոզիցիայի-զի խեղդել են ամէն մի ոչ-թայֆայականի ընտրութիւնը—դատապարտուել էին անգործնէութեան, լքման, յուսահատութեան և բռնել հրաժարման ուղին։

Իսկ միտք ունի այն առարկութիւնը, թէ դեռ տարի ու կէս էլ ժամանակ ունի հինը, երբ արդէն երկու մարմինների էլ կազմը վաղուց է լուծուել և, ուրեմն, հրամայական է միանգամայն նոր ընտրութիւն, իսպառ լուծուած յայտարարելով արդէն կազմալոյծ մարմինները։

Մեր ասածները փաստելու համար խօսենք օրինակներով։ Յայտնի է, որ փետրվ. ամսից առաջնորդարանը-իմա թեմական և թեմ. խորհրդի եղած 1-2 հոգին-հրատարակում էր «Թաւրիզի Յայտնութիւններ» անունունովմի շաբաթաթերթ, որով և անում էր պաշտօնական ազդեր։

Այդ թերթի №5 և 9 Մարտ համարում կարդում ենք. «ընտրուած պատգամաւորների մեծ մասն այժմ հրաժարուած կամ բացակայ՝ է, այնպէս որ հնարաւորութիւն չկայ կարևոր դէպքում թեմ. ժողով հրաւիրելու.... պէտք է թեմ. խորհրդի կազմը լրացնել...»։ Ա. Տ.-վ.

(Շարունակելի)

Իմ յիշողութիւնները պարոն Հ. Առաքելեանից.

Օգոստոս 21-ին մի խումբ՝ աւելի քան 60 յարգելի անձիքների բարեհաճ մասնակցութեամբ Արամեան դպրոցի սրահում մեր թանկագին հիւր և յայտնի հրապարակախօս պ. Առաքելեանի պատուին տրուեց մի բանկէթ։ Այդ երիկուն խօսուեցան մի քանի յարգանքի ճառեր, իսկ ես այդ առթիւ տալիս եմ իմ դրաւոր յիշողութիւնները։

Նրա հայրը՝ հանգուցեալ վաճառականապետ Այտ. Առաքելեանը 60-ական թուականից Ղարաբաղից տեղափոխուելով Թաւրիզ՝ իր ընտանիքով մեր քաղաքումն էր ապրում, որ յետոյ եղաւ մինը այն բարերարներից, որ 1870 թուականից հանգուցեալ վաճառականապետ Արզուման Նազարբէգեանի և մի քանի բարեգործ ձեռքերի հետ ստիպեցին արին Արամեան դպրոցի բարեկարգութեան և հանգանակեցին մի խոշոր գրամագլուխ, որին իրանք ևս նուիրաբերեցին նշանաւոր գումարներ։ Դրանցից առաջինի որդին է Հ. Առաքելեան, որ այսօր մի գրական խոշոր դէմք է, իսկ երկրորդինը՝ վաճառականապետ Զ. Նազարբէգեան, որ մի հասարակական անուանի և յարգելի գործիչ է, մանաւանդ ազգային ասպարէզում։

Ես պ. Հ. Առաքելեանին ճանաչել եմ 80-ական թուականներից՝ երբ նա մեր քաղաքումն էր բնակուած։ Նա մի կարճ ժամանակ սովորելով Արամեան դպրոցում, իր պատանի հասակից ցոյց էր տալիս մեծ եռանդ դէպի հայ գրականութիւնը։ Երբ «Մշակ» լրագիրը լոյս տեսաւ 1872-ից, նա իրը հազիւ քսանամեայ երիտասարդ սկսեց թղթակցել նրան, տալով իր վառվռուն թարմ կարծիքները։ Այդ ժամանակամիջոցին նա սկսեց թարգմանել Ֆրանսերէնից Ճաշակաց Արշաւանքի պատմութիւնը եւ այդ եղաւ նրա անդրանիկ երկասիրութիւնը։

Հ. Առաքելեանը շարունակ խօսում էր իր շրջանում, որ մեր հասարակութեան զարգացեալների համար մի երկրորդ դպրոց էլ հարկաւոր է, և այդ իրագործելու համար մի քանի բանիմաց անձիքների հետ խորհրդակցելով և նրանց աշխատակցութեամբ կազմակերպեց մեր ազգային ընթերցարանը Արամեան դպրոցին կից, որը ներփակում էր 700-800 հատոր գրքեր, հայերէն և օտար լեզուներով, նոյնպէս և այն ժամանակի գրէթէ բոլոր հայ լրագիրները։ Այդ ընթերցարանը ոչ միայն գրադարան դարձաւ, այլ մի որոշ հանդիպատեղ, ուր գալիս էին զարգացած աշակերտները, ուսուցիչները, վաճառականները և մտաւորականները, որոնք թէ ընթերցանութիւն էին անում, թէ իրար հետ ծանօթանում և թէ գրախօսութիւններ անում։ Այդ ընթերցարանը թէև այս օր իր գոյութիւնը մի կերպ քարշ է տալիս և իր նախկին դիրքումը չէ, բայց նա իր ժամանակին տուել է իր օգուտները։ Այսօր շատերը խոստովանում են, որ նա եղել է մի համակրելի հանդիսարան։

Անցաւ ժամանակ, Հ. Առաքելեանը փոխադրուեց Ռուսաստան, գնաց Պետերբուրգ համալսարանական բարձրը ուսում ստանալու համար, նա այն տեղից ուսանողական նստարանից էլ թղթակցում էր «Մշակին»։ Երբ նա վերադարձաւ Թիֆլիս միտքը բեղմնաւոր և գրիչը սրած՝ սկսեց գրել թղթակցել, յօդուածներ տալ թարգմանութիւններ անել, բրոշիւրներ հրատարակել և այլն։ Կարծես նա նախապէս ուխտել էր, որ իր ամբողջ կեանքի ընթացքում պիտի գործէ յօգուտ «Մշակի» և հայ գրականութեան, և նա իր ուխտին չդաւաճանեց։

Այսօր պ. Հ. Առաքելեանը, ոչ միայն «Մշակի» խմբագիր հրատարակիչներից մէկն է, այլ և ունէ իր սեփական օրգան-«Արօրը», որ մի շատ օգտակար հրատարակութիւն է։ Նա հետամուտ շեղաւ փառաւոր փայլուն պաշտօնների, որ նրան կյաջողուէր, այլ նա ընդմիշտ ընդդրկեց մամուլը և, հայ գրականութիւնը։

Եթէ այսօր մենք հաւաքենք և իմ բերենք Հ. Առաքելեանի բազմատեսակ յօդուածները, թարգմանութիւնները խմբագրականները հրատարակած բրոշիւրները, գրքերը և զանազան հեղինակութիւնները ահագին կուտակներ կդառնան և ահա դրանց մէջն է նրա փառքը։

Աւելին կասեմ, քանի տարի է որ նա միայնակ աշխատում է մի հայերէն հանրագիտակ բառարանի կամ անցիկլօպէդիտի վրայ և մեծ համբերատարութեամբ առաջ է տանում պրակ պրակ հրատարակելով. որը ոչ թէ մի արարածի, այլ մի խումբ բանասէրների զբաղմունք է. պատիւ և բիւր յարգանք յոգնաջան Հ. Առաքելեանին։

Մաղթենք, որ մեր 60-ամեայ բանասէր-հրապարակախօսը երկար ապրէ և իր տարիքի հասուն օրերում աւելի և աւելի եռանդագին աշխատէ մեր գրական աշխարհում։

Աւազ խան Ամբանդիլեանց

Թաւրիզ 28 Օգոստոս 1912

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

21 Օգոստոս Թէհրան

—

Նախորդ գրութեամբս գրել էի ընդդիմադիր Եար-Մահմադ, Հուսէն Ղուլի, և Մուսէիբ խաների արդի կառավարութեան առաջադրած պահանջների մասին։ Այդ պահանջների թուումն է նաև այն, որ Քիրմանշահի նահանգապետութիւնն էլ Շահզադէ Սալարդովլէին տրուի, որպէս միակ միջոց Պարսկաստանի այդ մասի խաղաղացման։ Փակագծի մէջ ասենք, յիշեալ խաները և նրանց արդի զինակիցների մեծ մասը Պարսիկ Դէմօկրատ կուսակցութեան անդամներն են, ուստի տեղիս դէմօկրատներից բաւականաչափ մարդիկ ծպտեալ կերպով գնացել և գնում են միանալու նրանց։

Այս պահանջմանց հետևանքը եղաւ այն, որ կառավարութիւնը լիազօրելով Յովսէփ Միրզահանցին, այս օր ճանապարհեց Քիր շահ հաշտութեան համար բանակցութիւններ կատարելու ըմբոստացած բանակամասի հետ։ Ինչ հետևանքի և կամ ինչ վախճանի են յանգելու բանակցութիւնները, այդ մասին կգրեմ լուրեր առնելուց յետոյ։

Ամսոյս 19-ի գիշերը մօտ ժամի 10-ին՝ Թէհրանից ութը վերստ հեռաւորութեան վրայ Ղազվինի ճանապարհին, Մէհրաբադի մօտ, գնացող թղթատարի վրայ են յարձակուել 20-25 ծպտեալ և հետևակ մարդիկ։ Թղթատար կառքը հեռացնելով՝ մի քանի հարիւր քայլ ճանապարհից՝ սկսել են կապտել 5-6 ճանապարհորդների, 2 ղուլամի և ձիավարին։ Փոստից խլել են մօտ 1700 կանխիկ լիրա։ Իսկ Եւրոպա ճամպուող քօլիներից անյայտացել են որոշ թանգ արժէք իրեր (հնութեան պատկանող)։ Ճանապարհորդներից աւազակների խլած կանխիկ դրամ, ժամացոյցներ, սիկարեթի տուփեր և այլն հազիւ արժելիս են եղել 4-500 թուման, (կողոպտուած ճանապարհորդներից մէկի ասութեամբ)։ Զարագործների մի մասի գլուխները ծածկուած է եղել Եւրոպական, իսկ մի մասինն էլ Պարսկական գլխարկ-

ներով. միմեանց հետ խօսելիս են եղել պարսկերէն, թուրքերէն և ռուսերէն լեզուներով։ Այս բոլոր գործողութիւնները աւազակների կողմից կատարուել են անաղմուկ, առանց մի գնդակ արձակելու։ Կողոպտուածներից մէկը նաև պատմում է, որ աւազակները մեզ և թ թատարին կողոպտելուց յետոյ, վերջը բռնեցին մայրաքաղաքի ճանապարհը և մթութեան մէջ անյայտացան։

Տակաւին կառավարութիւնը ոչ մի գործնական միջոց ձեռք չէ առել գտնելու և պատժելու չարագործներին, որպէս զի նման օրինակ դէպքեր այլ ևս չկրկնուեն։

Մեհրաբաղը կարելի է համարել մայրաքաղաքի հեռաւոր թաղերից մէկը, և երբ հենց կենտրոնական կառավարութեան քթի տակ կատարուում են այսպէս անախորժելի դէպքեր ու կատարողները զերծ են մնում հետապնդումներ ու պատիժներ կրելուց, ուրեմն «Միտք»ի ընթերցողներին դժուար չէ հասկանալ որ ինչեր չեն կատարուել ու կատարուում Սուլթանաբաղի շրջանի Հայաբնակ գիւղերում վերջերս կատարուած թալանների ժամանակ։ Նոյնպէս և ինչեր չեն կատարում Պարսկաստանի հեռաւոր ու խուլ անկիւններում, ուր սպանուածների հարստահարուածների, մի խօսքով բոլոր զրկուածների ձայները ոչ մամուլին է հասնում և ոչ էլ իշխանութեան։

Դրամի չափազանց շատութեան պատճառով, Տիկին Անահիտը կամ «Մայրիկը», այս օր ուխտագնացութիւն կատարեց Համադան, տեսնելու համար իւր հանգուցեալ ամուսին Եփրեմի սպանուած տեղը։

Մեզ յայտնում են, որ շուտով տեղս է հանելու Սուլթանաբաղի շրջանի հայերի կոտորման, բռնաբառման և կողոպտման բուն իսկ շարժառիթը եղող «Սև-Սատանայ»-Սորէն Վարդապետը։

Տեղեկանում ենք նաև, որ Սուլթանաբաղի գիւղացիներից տեղս գրանուող ծառաները՝ դիմելով օգնութիւն են ուզել Հ. Յ. Դ.-թեան լիտէր Դր. Ստեփանեանից, վերջինս խոստացել է տալ նրանց զէնքեր արժան գներով, որպէսզի տանեն գիւղ և նրանով պաշտպանուեն։

Տ. Ք.-եան

Գիլանեան նամակներ [1])

10 Օգոստոս Էնզէլի

Մօզաֆար-էդ-դին Շահը 1905-ին Եւրոպայից վերադառնալուց յետոյ, Ամիր Սալթանէն Քարկարուց անցնող Շահի բանակին արած հսկայական ծախսերին և ի վարձատրութիւն՝ Սարդարը Աժջատ տիտղոսին արժանանալով, թողեց Քարկարին և գնաց հաստատուեց Թէհրանում, որպէս ձիաւոր զօրքի հրամանատար։

Հրապարակը մնաց Զարղամին։ Վերջինս օր ըստ օրէ սկսեց մեծանալ։ Վրայ հասաւ 1907-ի խուժանային շարժումը։ Ամիր Սալթանի Քարկարու ապարանքը որպէս բռնակալութեան բաստիլ, քարքանդ եղաւ թալանչի ժողովրդի ձեռքով։

Նոյն բաղդին պիտի արժանանար նաև Զարղամը։ Սակայն վերջինս աւել ճարպիկ գտնուելով՝ սմմանադրականի կեղծ քղամիտ հագած՝ գիւղական անջումաններ և աղլիաներ ընտրել տուեց. և նրանց խորհդակցութեամբ շարունակեց դատաւորութիւն անել։ Այդ շրջանը երկար չտևեց։ Ինչպէս մեր ընթերցողները գիտեն 908 թուին Մամադ ալի Շահի ստեղծած ռէակցեան նորից թև ու թիկունք տուեց միապետական հակումներով անուած Զառղամին որ ցրեց գիւղական անջումանները և էլը սկսեց նախկին եղանակով որպէս տէր և տիրական դատաւորութիւն անել

Մի տարուան ազատութիւնը արդէն գիւղացիների աչքը բացել էր և չիպիտի կարողանար համբերել, երբ 909 թուին Յունվար 26-ին Սահմանադրականների ձեռքով Ռաշտի նահանգապետ Սարդար Աֆղամը սպանուեց և Գիլանը անցաւ ազատականների ձեռքը։

Մանաւանդ որ Զառղամի նախկին բարեկամ Սփէհդարն էլ գործի գլուխ էր անցած, անտառի դիպլոմատը անմիջապէս հանեց բռնակալի շապիկը, փոխարինելով Սահմանադրականով, ապացուցած լինելու համար որ սրտանց ազատութիւն ուզողների կողմն է։ 30 հոգի իւր ձիաւորներից զինելով, եղբօր Մամադ խանի առաջնորդութեամբ ուղարկեց Ռաշտ 909 թուի փետրվարին և մի նամակով հպատակութիւն յայտնեց տիրող կառավարութեան-Սահմանադրականների ցանկութիւնն էլ հէնց այդ էր, որ թալիշի կողմից ապահովուած լինի Գիլանի նոր կառավարութիւնը։

Զաղվինու վրայ արշաւող բանակի հետ գնաց նաև Մամադ խանը իւր 30 մարդկանցով, Զառղամի աչ թեւը չկար։ Հարստահարուածները սկսեցին գլուխ բարձրացնել թաղի խանի և մի ինչ որ Հաֆիզ Էֆենդու առաջնորդութեամբ։ Պահանջների շարքը սկսուել էր. յետ էին ուզում տարիների ընթացքում ապօրինի կերպով իւրացրած հարստութիւնը։

Զարղամը պատասխանում է, որ անցեալում եղածը մոռացութեան տան, բաւականան ներկայ ազատութեամբ։

Սակայն գրգռուած ժողովուրդը առանց ուշադրութիւն դարձնելու երեկուան հարստահարչի խօսքերին, ապստամբելով 1909 թուի ապրիլին գրաւում է նրանց սեպհականութիւնը։ Ինչ որ տան մէջ կար թալանի ենթարկում. տաւար, ապրանք, ամբողջ նախիրները իւրացնելով Զառղամին փախցնում է Թալիշից դուրս։ Զմոռանամ յիշել, որ ճարպիկ Զառղամը 50-60 հատ լաւ հրացաններ և տան միջի թանգագին իրերից բաւական թագցրած էր մինչ այդ օրը։

Եղածի առթիւ տեղեկութիւն հասաւ Ռաշտ։ Յեղափոխական կառավարութեան վրայ այնքան էլ լաւ տպաւորութիւն չթողեց Թալիշցիների արածը։ Բայց եղածը եղել էր, Ռաշտուց նոր դատաւոր ուղարկուեց Զառղամի փոխարէնը։

Ղազվինը գրաւելուց յետոյ Մամադ խանը վերադառնալով՝ Զարղամը հրապարակ դուրս եկաւ։ Նոր դատաւորի օգնութեամբ և նոր կառավարութեան հրամանաւ երկու եղբայր միասին սկսեցին յետ պահանջել թալանուած հարստութիւնը որից հազիւ կէս մասը ստացուեց։

Թալիշը բաժանուեց երկու մասի Զառղամականների և Թաղի խանա-Հաֆիզ Էֆէնտիական կողմերի, առաջինի ոյժը օր ըստօրէ շատանալով վերջինները փախստականի կեանք սկսեցին անցկացնել անտառներում և սարերում։

Վերջապէս Զարղամը գատաւոր եղաւ։ Անցեալ աշնան հակառակորդներից Հաֆիզին կտոր կտոր անել տուեց։

Հին հակառակորդներից Թաղի խանն է մնացել առայժմ։

Զարղամի թաւարդ ընկնելու պատճառները։ Այդ կտեսնենք յաջորդիւ։

(Շարունակելի) Անհաշ

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

—

Սեպտ. 1-ին շաբաթ օր, կէսօրից յետոյ ժամը 4½-ին Սփահտար Ազամը կառքով ուղեկցուած 100-ից աւելի միաղգեստ պարսիկ կօզակներով՝ եկել էր փոխայցելութեան ռուսական հիւպատոսարան։ Նոյն օրը իշխանը այցելութիւններ է տուել և միւս հիւպատոսներին։

Նոյնը օրը բազարում երկու ոսկերիչ հայ երիտասարդ տղաներ և մի հասակաւոր հայ ոսկերիչ բազարում կրել են թուրք խուժանի յարձակումը, ծեծուել են շատ սաստիկ, ապա վրայ են հասել ոստիկանները, որոնք փոխանակ ամբոխին ցրելու և ծեծուողներին ազատելու, իրենք ևս սկսել են մտրակներով ծեծել նոցա և մազերից քաշքշելով այդ երեք հոգուն տարել են բէկլէր բէկու մօտ։ Հայերի յանցանքն, ասում են, այն է եղել, որ արգելել են և չեն թողել հեռանայ մի պարսիկ կին, որ իրենց մատանին վերցրած կամեցել է գնալ առանց դրամ տալու։ Այդ բանից գրգռուած թուրքերը ստեղծել են վերոյիշեալ միջադէպը։ Երիտասարդները ազատուել են, ծերունին դեռ պահուած և շղթայի տակ էր։ Առաջնորդարանի կողմից տէր Հմայեակը գնալով հաճի Շօջա-էդ-Դովլի մօտ, ազատել է նրան շղթաներից։

Հաւաստի աղբիւրից իմանում ենք, որ Լիլաւի դպրոցի հոգաբարձուներից պ. պ. Արտաշէս Տէր Յովհաննիսեան և Մ. Աւագեան հրաժարուել են։

Ամսոյս 3-ին նոր Քարկուզարը փոխայցելութեան էր եկել առաջնորդարան։

Մի կարգ հետաքրքրական լուրեր, ուղարկուած Թէհրանի մեր սեփական թղթակցից, մնացին յաջորդ համարին։

Վերջերս ռուսները Արքում հողի տակ թագցուած են գտել այն թնդանօթները, որ ռուս-պարսկական պատերազմների հաշտութեան բանակցութիւններից յետոյ Ռուսաց կառավարութիւնը նուիրել էր Աբբաս Միրզին։ Թնդանօթների վրայ Ռուսերէն և պարսկերէն վերտառութիւնները կարծես նոր փորագրած լինին։ Թնդանօթները բերուած են հիւպատոսարան, մաքրուել ժանգերից և պէտք է ուղարկուեն Ռուսաստան։

Թեմիս ժամանակաւոր կառավարիչը իւր այցելութիւնն է տուել հիւպատուարանին։

«Մշակ» №189-ում կարդում ենք Հայկազունու մերկացնող պատասխանը կենտրոնականի տեսչի առողջական վիճակի մասին։

Ամբողջ Ռուսաստանի թերթերը լի են հայրենական պատերազմի առթիւ գնահատական զօրեղ յօդուածներով։

Ուրախութեամբ լսում ենք որ Հ. Մելիք Թանգեանը եռանդով առաջ է տանում մեր դպրոցների ծրագրների նոյնացման գործը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԻՆԸ [1])

Շ. Լեսուռնոի

Երկրագնդի ամեն կողմերում կնոջ վիճակուած է կողուկ լինել. միայն թէ՝ քաղաքակիրթ ազգերի մէջ աւելի փոքր, իսկ վայրենիների մէջ աւելի մեծ չափով։

Պոլինեզիայում կինը մի ապրանք է։ Այդտեղ նա նախ քան ամուսնանալը իրան սիրող մէջ ազատ է զգում, բայց երբ ամուսնանում է, դառնում է մարդու գերին որի հետ իրաւունք է համարում իրեն քէֆը ուզածին պէս վարուելու։

Ամուսնական հաւատարմութեան խախտումը կնոջ կողմից խստիւ պատժւում է, բայց միւս կողմից կինը երբէք իրաւունք չունի դիմադրելու ամուսնու ցանկութեան, երբ նա ուզենայ նրան վաճառելու կամ փոխ տալու իր ընկերոջ։ Կնոջ վրայ է ծանրացած ամուսնու համար կերակուր ճարելու հոգսը։ Շատ անգամ կինը ժամերով մինչև գօտկատեղը ջրի մէջ արևադարձային կիզիչ ճառագայթների տակ ձուկ կամ ջրային կենդանիներ է որսում ամուսնու համար. բայց դրա փոխարէն, կինը իրաւունք չունի այսպէս չարչարանքով ձեռք բերուած կերակուրի համն առնելու, նախ քան իր ամուսնու կշտանալը։ Պոլինեզիայի բոլոր կղզիներում չէք տեսնի կնոջը տղամարդու հետ միասին մի սեղանի նստած։ Թայիթի կղզիներում՝ կանայք տարբեր կըրակների վրայ են պատրաստում իրանց և և ամուսինների կերակուրները և տարբեր էլ խրճիթներում ուտում։ Բացի այդ՝ խըստիւ արգելուած է կանանց ոտ դնել այն տեղերը, որտեղով ամուսինը անցել է, կամ չմօտենալ զէնքերին ու ձկնորսական գործիքներին, նրանց չպղծելու համար։ Խստիւ արգելուած է նաև ամուսնու կամ հօր գլխի մօտով կամ վրայով անցնելը՝ երբ նրանք քնած են։ Մարկիզեան կղզիների վրայ կանանց արգելուած է ջուրը մտնել՝ իրանց ներկայութեամբ ձկներին չվախցնելու համար։ Նրանց արգելուած է նաև ընտիր կերակուրների գործածութիւնը, որովհետև դրանք զոհարերուում են աստուածներին։ Այդ կերակուրների շարքին են պատկանում թռչունները, կոկոսեան ընկոյզները, ջղախոտը։ Խոզի միսը նոյնպէս արգելուած է կանանց։ Սանդվիչեան կղզիներում շատ կանայք քրիստոնէութիւն են ընդունել հէնց նրա համար, որ այդ կրօնը թոյլատրում է խոզի միսի գործածութիւնը նաև կանանց։ Ռափա փոքրիկ կղզու վրայ տղամարդիկ սուրը են համարում և սովորութիւն է որ կինը ամբողջ մի տարի պարտաւոր է կերակուրի պատառը ամուսնու բերանը դնել։ Այս տեսակ յիմար սովորութիւն գոյութիւն ունի նաև մի քանի փոքրիկ կղզիների վրայ։

Մի քանի արշիպելագներում տղամարդիկ են տներ ու նաւակներ շինում, գետինը մշակում, բայց այնուամենայնիւ կնոջ վրայ է ծանրացած դժուարին գործերը -թթենիների կեղևից գործածքներ հիւսելը, բեռ կրելը և այլն։ Նոր-Զելանդիայում բեռ կրելը շատ մեծ ամօթ է համարուում տղամարդկանց համար, այդ պատճառով էլ այդ պաշտօնը կատարում են կանայք։

(Շարունակելի)

[1]) Տես «Միտք» №-26

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Ռուսական զօրամասի հետապընդումներից նեղն ընկած Շահսուվանները ամրացել են Սաւալանի անմատչելի բարձունքներում։ Ռուսները պաշարել են ելքերը, որ կամ ցրտից ու սովից անօգտուր լինին նոքա և կամ ակամայ կռուի իջնեն։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թէհրանի մեր թղթակիցը մեզ յայտնում է, որ կառավարութիւնը պատրաստւում է ծանուցանողական գրեր ուղարկել Մէջլիսի նոր ընտրութեանց մասին։ Եւրոպայից կանչուած է խնամակալը, որ պատասխանել է թէ կգայ։

ԱԶԳԱՅԻՆ

Տաճկահայ նոր սարսափները խիստ յուզել և լարել են Պոլսահայերին։ 3000 հայեր Թափուել են ազգային ժողովարանը, ուր Արշարունի պատրիարքը տուել է իւր դիմումների նկարագիրը։

Երեսփոխաններից Մուրադ, Փափազեան, Հմայեակ Արամեան, Տէր Մովսիսեան և այլք յանուն իրենց կուսակցութիւնների արել են խիստ յայտարարութիւններ բազմաչարչար ազգակիցների տապակուելուն ու ջարդուելուն շուտ դարման տանելու համար։ Որոշուել է մի շաբաթ ևս սպասել, որպէս զի կազմուի երեսփոխանական անդամոց մեծամասնութիւն և իմացուի նաև կառավարութեան վերջնական ասելիքը, սովորական խոստումներից բացի։

Պատրիարքի մօտ

Պատրիարքի սպառնալիքը պատրիարքարանփակելը, հրաժարուելը և բանալիները Կառավարութեան յանձնելը Հնչակեանները սխալ քաղաքականութիւն են համարել։ Ուղարկել են պատրիարքի մօտ մի առանձին պատուիրակութիւն, որ յայտնէ նորան, թէ չկրկնէ Դուրեանի սխալ քայլերը և մնալով իր պաշտօնում շարունակէ իր բողոքներն ու դիմումները կառավարութեան առաջ տարաբաղդ հայերի վիճակը բարուոքելու համար։

Ժողովրդականացող Օրմանեանը

Պոլսի թերթերը հաղորդում են Օրմանեանի օր աւուր աճող ժողովրդականութեան ու հեղինակութեան մասին, հակառակ Դաշնակցականների ոտընձգութեանց։ Դաշնակցականները անմեղ դատապարտեալի ժողովրդականացման մէջ տեսնում են իրենց բարոյական անկումն ու ամօթապարտութիւնը։ Մանրամասնութիւնները յաջորդիւ թերևս։

ՎԵՐՋԻՆ ՊԱՀՈՒՆ

Ազգային ժողովը կարդարցնէ Օրմանեան սրբազանը

Այս ուրբաթ օր Ազգային պատկառելի ժողովը խիստ կարևոր որոշումը տուաւ զոր թերթերը չկարողացան արձանագրել՝ լռելյայն ըլալուն պատճառաւ։

Ազգ. ժողովը միաձայնութեամբ որոշեց թէ Օրմանեան սրբազանը իր վրայ ծանրացող ամբաստանութիւնէ մը բոլորովին զերծ էր և թէ չորս տարի է իվեր անմեղ տեղը կդատապարտէինք զինքը։

Լրագրներից

Ուրախ ենք որ հայկական լռեցուած արդարադատութիւնը վերջապէս բարձրագլուխ և յաղթական կանգնեց հրապարակում և նորէն անպարտ հրաչակուեց այն անմեղը, դէպի որը ցեխ ու թուք էին շպրտում բոլոր նոքանք, որոնք նրա անկման և վարկաբեկման մէջ ապահովուած էին տեսնում իրենց գրպանի պարարտացումը և թայֆայական կծուած շահերի յարատևումը։ Խմբ.

ԱՐՏԱՔԻՆ

Բալքաններում

Գրաֆ Բերթհոլդի առաջարկը

Գր. Բերթհոլդը տալիս է իւր առաջարկների պարզաբանութիւնը։ Աւստրօ-Ունգարիոյ կառավարութիւնը գտնում է յարմար, որ Քրիստոնէական ազգութիւնները ևս պէտք է ստանան ընդարձակ վարչական աւտոնոմիա ինչպէս Ալբանիան։ Իւրաքանչիւր քր. ազգ պէտք է ազատ լինի օգտուելու իւր լեզուից և իրաւունք ունենայ հիմնելու ազգային-լուսաւորական հիմնարկութիւններ։ Իւրաքանչիւր քրիստ. ազգ իւր զինուորական ծառայութիւնը պէտք անէ իւր տերիտորիայում։ Առ հասարակ գրաֆը պահանջում է, որ Ալբանացոց տրուած իրաւունքները տրուեն նաև քրիստոնեայ ազգութիւններին։

«Նէօյէ Ֆրայէ Փրեսէ»-ի թղթակիցը Օգոստ. 25 թուով հեռագրում է Պոլսից, որ եթէ Գրաֆի առաջարկը պետութեանց կողմից հաւանելի լինի, ապա Տաճիկ կառավարութիւնն էլ կը-պահանջի կապիտուլասիօնների փոխումը և ներմուծուող ապրանքների հարկի աւելացումը։ Այս դէպքում միայն Տաճկաստանը կգիջի տալ ընդարձակ վարչական բէֆօրմներ։

Աւստրիոյ միջամտութիւնը

25 Օգոստ. Երէկ Աւստրօ-Ունգարական դեսպան մարկիզ Պալլավիչինին եկաւ Դուռը և մինստրներիբարձրի արտակարգ նիստից դուրս կանչեց արտ. գործոց մինիստր Նորիտունկեան Բէյին և հաղորդելով նորան Նովաբազարի շրջանում, իբրև թէ, շարունակուող անկարգութեանց մասին, խնդրեց ձեռք առնել եռանդուն միջոցներ անդորրութիւն վերականգնելու համար։

Մակեդոնիայում

25 Օգոստ. Դրութիւնը Մակեդոնիայում դառնում է յուզումնալից։ Պրիլէպում, «Dette Publique» կալուածքում ռումբի պայթիւն տեղի ունեցաւ։ Միւս պայթիւնն եղաւ Օխրիդ գիւղի մօտ։ Մուսուլման ազգաբնակութիւնը փորձեց Բոլգարական ջարդ առաջացնել, սակայն արգելք եղաւ մաքսատան միւդիրը, որի վրայ թափեցին իրենց բարկութիւնը ուղղափառները։ Միւդիրը ծեծուել է մերձ ի մահ։

Հացահատիկների արգելումը

Վիեննայի առաջնորդող շրջաններում խորը տպաւորութիւն թողեց Սերբ կառավարութեան հացահատիկների արտասահման արգելման ֆակտը։

Ալբանիայում

Ըստ պայմանների՝ Տաճիկ կառավարութիւնը զիջեց նշանակել պաշտօնեաներ տեղական վարչական պաշտօններում։

Ապստամբութեան պարագլուխները այժմ դրուած են պատասխանատու պաշտօններում։ Մահմէդ փաշան՝ Պրիզրէնի միւթասէրրիֆ, նախկին դէպուտատ Եահիան՝ Դիակովոյի կայմակամ, Բիդա-Բէյը՝ և նախկին դէպուտատ Հասան-Բէյը նշանակուում են թէսարիֆներ, առաջինը Իպէկում, երկրորդը՝ Պրիշտինում։

Սերբական ջարդեր

Ալբանացիք ջարդում և կողոպտում են հիւս. Ալբանիոյ Սերբ ազգաբնակութիւնը։ Սերբերի դրութիւնն անտանելի է։

Տաճկաստան

Նախընտրական պայքար

25 Օգոստ. Սկսում է նախընտրական պայքար։ Իշխանութիւնը կազմում է նոր ընտրական ցուցակները որովհետև հին ցուցակները կազմուած էին անճիշտ՝ եր. թուրքերի ճնշման ներքոյ։

Մէջլիզներում հոգևորականութիւնը կուիւ է բարձրացրել «Միութիւն և Յառաջադիմութիւն» Կոմէտէտի դէմ եղողներին, անուանելով սոցա մասօններ և միւսիւլման կրօնի թշնամիներ։

Ներքին գործոց մինիստրը ընտրական ցուցակները անճիշտ գրտնելով հրամայեց կազմել նորերը։

Իտալական նաւատորմը

Կ. Պոլիս 25 Օգոստ. Զմիւռնիոյ ջրերում լողում է 17 բազմանաւերից բաղկացած Իտալական մի էսկատրա։ Այդ էսկատրայի ցոյցը այստեղ համարում են որպէս ճնշում՝ հաշտ. բանակցութիւնների ելքին ի նպաստ։

Չինաստան

Հիմնական օրէնքներ

Եուանշիկայը հաստատեց օրէնքը պարլամենտական ընտրութեանց, որ պէտք է սկսուէն ցուցվար 10-ից

Տեսակցութիւն Բուխլաւում

Օգոստ. 25-ին Բուխլաւում տեղի է ունեցել Գրաֆ Բերթհոլդի և Ֆոն-Բէթման-Հոլվէգի ժամերական բնաւորութիւն կրող տեսակցութիւնը։ Բեռլինում այդ տեսակցութեան տալիս են քաղաքական նշանակ.։ Ենթադրւում է, որ այդտեղ կմշակուի միասնական գործողութեան մի ծրագիր՝ Գրաֆ Բերթհոլդի առաջարկի տապալման կամ Բալքաններում յանկարծական բարդութեանց դէպքում։

ՊՕՍՏԱՐԿՂ

Թէհրան—գործակալ պ. Մ. Փափազեանին. Ստացանք բաժնեգների հաշուին Ձեր ուղարկած 15 թուման խոխանակագիրը շնորհակալենք.

Մեր բաժանորդներին.-խնդրում ենք փակել Ձեր ապառիկների հաշիւը։

Վերջին պահուն

Ամիսներ շարունակ-հակառակ կար. եպս-ի անգամ եռակի և նաև մամուլով արած հրաւէրների-նիստեր չգումարող պատգմ. ժողովը երէկ-7Սեպտ.-հէնց առաջին հրաւէրին ժողովելով՝ միձայն Ատրպատականի առաջնորդ է ընտրել ժամանակաւոր կառավարչի պաշտօնով եկած հայր Մել. Թանգեանին։

Սեպտ. 6-ին Հ. Մել. Թանգեանը գնացել է Հաջի Շօջէդ-Դովլի և Սփահդար Աազամի տեսութեան։

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„МАГАЗИНЪ ПАРИЖЪ“
PROPRIÉTAIRE J. D. THOMASSIAN
ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ
ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒԶՆԵՐ
ԹԱԼԵՐ ԵՒ ՓԷՇԵՐ
Եւ նոր կտրներ, նոյնպէս տերմօսներ, որոնք տաք կամ սառը ջուրը 24 ժամ նոյն տեմպերատիւրում պահելու յատկութիւն ունին։
ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

Պարոն Մարտիրոս Նազարբէկեանցի տան դիմաց

ԾԱԽԻՈՒՄ Է

Տ. Ալմաստ Սիմէօնեանցի տունը երկու սենեակ և ուրիշ յարմարութիւններով։

3—2 Դիմել Միհաս Տէր-Մանուկեանին

ՓՆՏՐԻՈՒՄ Է մի տուն Ղալա թաղում 3—4 սենեակներով։ Սենեակները լինելու են մեծ ու լուսաւոր, յարմար զիրզամիներով, խոհանոցով և այլն։ Վարձու տուողը դիմելու է պ. Վաղարշակ Զաքարեարին։